տեսակ հողեր՝ հայրենի, պարգեւական եւ սակագին: Սրանց յարաբերութիւնը անմիջական տէրերի կարող էր միակերպ չլինել: Երկրի վեհապետի դիրքը եւս սրանց հանդէպ մութ է:

Չի կարելի անդամ վստահել որ նախարարական հողերը բոլորն էլ ազատ լինէին պետական ծանրութիւնից: Դուինի ժողովի կանոններից մէկը յայտարարում է որ եկեղեցականները «ընդ ազատաց տոհմին են կարգեալ», որ եկեղեցու հողն ու ջուրը ազատ է, եւ երէցների տները «ի դիւանին եղեալ են, բայց միայն գիասն տալ յարքունիս»: Ասել է թէ ազատ հողը պարտաւոր էր որոշ հաս տալ պետական գանձարանին:

Այս ակամայ խոստովանութիւնը կարեւոր է: Եկեղեցին արտացոլում է նախարարական միջավայրի կարգերը եւ իր ազատութիւնը նախարարականի պատճէն է: Իրաւունք ունինք կասկածելու, որ նախարարական հողերին եւս անծանօթ չէ եղել արքունական հասի վճարումը:

Այս պարագան նոր լոյս է սփռում դեհկանների հարկահանութեան վերայ: Ոչ թէ Սասանեան բիւրոկրատիան էր նրանց յանձնել հարկերի գանձումը, այլ հին իրաւունք էր, որ պահել էին փառքի վերջալոյսին դէթ գիւղական նեղ շրջանում:

Այս նշանակում է, որ պետական գանձարանը ստանալիք ունէր նաեւ նախարարական գիւղերից: Ուրիշ խօսքով բիւզանդական կոլոնների նման նախարարական գիւղացիք վճարելու էին canon հողատիրոջ եւ որոշ հաս կամ հողահարկ պետութեան:

Եթէ միայն ճիշդ է այս ենթադրութիւնը, կարելի է ասել պատրաստ է այն դուռը, որ տանում է կոլոնատից դէպի սերվաժ, միայն թէ միւս պայմանները ներեն:

Այս պայմանների մէջ է ամենից առաջ հողի եւ բնակչութեան յարաբերական չափը: Գիւղացու շղթայումը հողին հետեւանք է այն երեւոյթի, որ աշխատող, մշակող ձեռքերն աւելի քիչ են եղել քան հողը, աւելի թանգ: Անընդհատ պատերազմների եւ այլ աղէտների պատճառով Բիւզանդիայում բնակչութիւնը նօսրացել էր եւ բաւական չէր լայնածիր տարածութիւնները մշակելու համար: Հողատէրերի եւ պետութեան շահերը համերաշխաբար պահանջում էին չթողնել հեռանալ միանգամ ձեռք բերած աշխատող ոյժերը, ուրեմն, գիւղացուն մեխել հողին եւ զրկել նրան տեղաշարժի եւ անձնական ազատութեան իրաւունքից: Սրանով ստեղծւում է կոլոնի համար այն դրրութիւնը, որ կոչւում է սերվաժ:

Հայաստանում պակաս չէին սով, սրածութիւն եւ անթիւ կոտորածներ: Սակայն, որքան նուազում է ժողովուրդը, աւելի մեծ չափով պակասում էր եւ հողատէր ազնուականութիւնը: Քաղաքական աղէտների առաջին զոհերը ազատներն էին:

Միւս կողմից երկրագործութեան պիտանի դաշտերը այնքան մեծ ծաւալ չունին, որ նրանց մշակման համար ձեռքերի սակաւութիւն զգացուէր: Հիմք կայ կարծելու, որ նախարարական կարգերի ծաղկման շրջանում միշտ հողն էր պակաս քան մարդը: Վրացերէն լեզուն ունի բոգանի բառը, որ նշանակում է հողազուրկ գիւղացի, նման ռուսական bobil: Սա ուրիշ բան չէ եթէ ոչ հայերէն բոկանի, որ երբեմն ունեցել է այդ իմաստը եւ իր հետ տարել է եւ պահել վրաց լեզուում: Կարեւոր տերմին է թւում եւ ոչ սովորական բառ, եւ հին վկայ սակաւահողութեան:

Հողի եւ աշխատանքի համեմատական չափը նպաստաւոր պայման չէր, որ սերվաժը բողբոջէր Հայաստանում արեւմտեան ֆէոդալականութեան յատուկ երանգներով:

Կարիք չկայ նկատելու, որ այս բոլորը բարդ հարցեր են, կարօտ հետաքնին ուսումնասիրութեան, եւ մեր անցողակի նկատողութիւնները չեն, որ պիտի բերեն սպասած լուսաբանութիւնը:

Մեր նպատակն էր միայն քննութեան առնել պ. Մանանդեանի դիտողութիւնները շինականութեան մասին եւ քննեցինք լայն հասարակութեան առաջ, յուսալով որ կը գտնուին բանիբուն անձինք, որ չեն զլանալ գրի առնել հայ երկրագործական միջավայրը իր բոլոր կողմերով, սովորոյթներով եւ հասկացողութիւններով: Չէ թէ միայն մօտալուտ կորստից ազատած կը լինին ժողովրդական գանձերը, այլ եւ որոշ նպաստ կը բերեն անցեալի ուսումնասիրութեան: